ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» դեկտեմբերի 2014թ. **N __- Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի
N1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշման 108-րդ կետը առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Երևանի ավագանու հրապարակային նիստերն ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են Երևանի պաշտոնական համացանցային կայքում՝ www.yerevan.am: Առցանց հեռարձակումն իրականացնում է Քաղաքապետարանի Աշխատակազմը:»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի փետրվարի 10-ից:

Նախագծի հեղինակներ՝ Երևան քաղաքի ավագանու
«Բարև Երևան» խմբակցության ղեկավար՝ **Ա.Բախշյան**

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար՝ **Թ.Պողոսյան**

«Հայաստանի Հանրապետական կուսակցության»
խմբակցության ղեկավար՝ **Ս.Մկրտչյան**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 180-րդ կետի պահանջով, համաձայն որի ավագանու նիստը հրապարակային է: Սա պահանջում է ավագանու օրենքով վերապահված լիազորություններն իրականացնել առավել արդյունավետ, ապահովել ավագանու աշխատանքների հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

Երևան քաղաքի ավագանու 30.04.2014թ. հ.154-Ն որոշմամբ ևս ավագանին պարտավորություն է ստանձնել ապահովել Երևանի ավագանու գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Նշված որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով սահմանված է, որ նշված կարգի իրականացման նպատակն է՝ համայնքի բնակիչների համար համայնքի կառավարմանը, համայնքի քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում մասնակցելու հնարավորության, ինչպես նաև հանրային տեղեկատվության լիակատար մատչելիության, համայնքի տարածքում գործող կանոնների և պարտականությունների իմացության ապահովումն է: Բացի այդ, նշված կարգի 4-րդ կետով թվարկված՝ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության սկզբունքներից է թափանցիկությունը և հրապարակայնությունը, իսկ 7-րդ կետով սահմանված տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության միջոցներից է բարձր տեխնոլոգիաների կիրառումը:

Երևան քաղաքի ավագանու 30.04.2014թ. հ.154-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի համաձայն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը ապահովման բնագավառում Երևանի քաղաքապետին վերապահված լիազորություններից է բնակիչների տեղեկատվության ստացման հնարավորության ապահովումը:

Վերոնշյալ դրույթները պարզապես պահանջում են Երևան քաղաքի ավագանու նիստերը հեռարձակել առցանց:

Երևանի ավագանու Կանոնակարգում համապատասխան լրացում կատարելով առաջարկվում է առցանց հեռարձակել Երևանի ավագանու հրապարակային նիստերը՝ այդ պարտավորությունը դնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վրա: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմնի՝ ավագանու աշխատանքներին հետևելու այս եղանակը կբարձրացնի ոչ միայն ավագանու աշխատանքների հրապարակայնությունն ու թափանցիկությունը, այլև համայնքի բնակչին մասնակիրց կդարձնի Երևան քաղաքի կառավարմանը:

Նախագծի հեղինակներ՝ Երևան քաղաքի ավագանու
«Բարև Երևան» խմբակցության ղեկավար՝ **Ա.Բախշյան**

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար՝ **Թ.Պողոսյան**

«Հայաստանի Հանրապետական կուսակցության»
խմբակցության ղեկավար՝ **Ս.Մկրտչյան**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Նախագծի հեղինակներ՝ Երևան քաղաքի ավագանու
«Բարև Երևան» խմբակցության ղեկավար՝ **Ա.Բախշյան**

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար՝ **Թ.Պողոսյան**

«Հայաստանի Հանրապետական կուսակցության»
խմբակցության ղեկավար՝ **Ս.Մկրտչյան**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

Նախագծի հեղինակներ՝ Երևան քաղաքի ավագանու
«Բարև Երևան» խմբակցության ղեկավար՝ Ա.Բախշյան

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Թ.Պողոսյան

«Հայաստանի Հանրապետական կուսակցության»
խմբակցության ղեկավար՝ Ս.Մկրտչյան